

ПОЛИТИКА

2020 թ. Արցախի դեմ ուղղված ադրբեջանա-թուրքական ագրեսիան որպես հակամարտությունների «լուծման» և արդի աշխարհաքաղաքական զարգացումների ցուցիչ¹

Փաշայան Հրայր Ա.

քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մեսրոպ Մաշտոց համալսարան (Ստեփանակերտ, Արցախի Հանրապետություն)

hrayr.pashayan@mail.ru

ՀՏԳ՝ 327; EDN: YHLJJX

Հանգուցաբառեր՝ Ղարաբաղյան հիմնախնդիր, ադրբեջանա-թուրքական ագրեսիա, 44-օրյա պատերազմ, գերտերություններ, գորպալ աշխարհաքաղաքական զարգացումներ, ռուս-ուկրանիական հակամարտություն, նոր աշխարհակարգ, Արցախի Հանրապետություն:

Азербайджано-турецкая агрессия против Арцаха в 2020 года как индикатор «решение» конфликтов и современных геополитических событий

Пашаян Грайр А.

кандидат политических наук, доцент, преподаватель Арцахского государственного университета и Университета Месропа Маштоца (Степанакерт, Республика Арцах)

hrayr.pashayan@mail.ru

Аннотация. Поведение международного сообщества и особенно сверхдержав во время азербайджано-турецкой агрессии против Арцаха в 2020 году привело не только к изменению военно-политического ландшафта Южного Кавказа с новой перестановкой сил. Эти, казалось бы, чисто региональные события, несущие на себе печать геополитических событий, оказали определенное влияние на трансформацию представлений, позиций и особенно на поиск решений внерегиональных конфликтов.

Анализируя глобальные геополитические изменения и ключевые события вокруг карабахского конфликта, мы приходим к следующему выводу. Карабахский конфликт возник, заморожен и разогрет в контексте глобальных геополитических изменений. Истоки проблемы в 1920-е годы, а затем заморозки тесно связаны с глобальными изменениями, приведшими к формированию двух мировых полюсов.

Возобновление арцахского движения в 1988 году и последовавшие за этим боевые действия стали следствием новых глобальных изменений, в целом приведших к формированию однополярного мироустройства. Азербайджанская агрессия против Арцаха в 2020 году и нынешний конфликт России и Запада позволяют говорить об очередной волне глобальных геополитических изменений.

Пользуясь достаточно уязвимым положением армянских сторон после боевых действий 2020 года и российско-западных конфликтов, азербайджанская сторона стремится как можно скорее принудить Армению к подписанию так называемого мирного соглашения. Об этом свидетельствуют различные провокации, осуществляемые в Арцахе, в зоне ответственности российских миротворцев, а также проникновение азербайджанских вооруженных сил на территорию Республики Армения.

Учитывая вышеуказанные реалии, мы должны предпринять шаги, чтобы занять свое место в формирующемся новом мировом порядке. Естественно, для этого необходимо много работать во всех сферах, понимая, что наряду с вызовами создаются новые возможности.

Ключевые слова: Карабахская проблема, азербайджано-турецкая агрессия, 44-дневная война, сверхдержавы, глобальные геополитические процессы, российско-украинский конфликт, новый мировой порядок, Республика Арцах.

Azerbaijani-Turkish aggression against Artsakh in 2020 as an indicator of the "solution" of conflicts and current geopolitical events

Pashayan Hrayr A.

Lecturer at Artsakh State University and Mesrop Mashtots University, Candidate of Political Science, Associate Professor (Stepanakert, Republic Artsakh)

hrayr.pashayan@mail.ru

Abstract. The behavior of the international community and especially the superpowers during the Azerbaijani-Turkish aggression against Artsakh in 2020 led not only to change in the military-political landscape of the South Caucasus with

¹ Հետազոտությունն իրականացվել է ԱՀ ԿԳՄՍ նախարարության կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության՝ N° scs20-003 գիտական թեմայի շրջանակներում:

a new reshuffling of forces. These seemingly purely regional events, bearing the stamp of geopolitical events, had a certain impact on the transformation of ideas, positions, and especially on the search for solutions to extra-regional conflicts.

Analyzing the global geopolitical changes and the key developments around the Karabakh conflict, we come to the following conclusion. The Karabakh conflict has arisen, frozen and heated in the context of global geopolitical changes. The origins of the problem in the 1920s, and then the freezing, are closely linked to the global changes that led to the formation of two world poles.

The resumption of the Artsakh movement in 1988 and the ensuing hostilities were the result of new global changes that generally led to the formation of a unipolar world order. The Azeri aggression against Artsakh in 2020, the current Russia-West conflict, allows us to talk about another wave of global geopolitical changes.

Taking advantage of the rather vulnerable situation of the Armenian parties after the 2020 hostilities and the Russian-Western conflicts, the Azerbaijani side seeks to force Armenia to sign the so-called peace agreement as soon as possible. This is evidenced by the various provocations carried out in Artsakh, in the area of responsibility of the Russian peacekeepers, as well as the penetration of the Azerbaijani armed forces into the territory of the Republic of Armenia.

Given the above realities, we must take steps to take our place in the emerging new world order. Naturally, in order to achieve that, it is necessary to work hard in all spheres, realizing that new opportunities are created along with the challenges.

Keywords: Karabakh problem, Azerbaijani-Turkish aggression, 44-day war, superpowers, global geopolitical processes, Russian-Ukrainian conflict, new world order, Republic of Artsakh.

Խնդիրը: 2020 թվականին Արցախի դեմ ուղղված ադրբեջանա-թուրքական ագրեսիայի ընթացքում միջազգային հանրության ու հատկապես գերտերությունների դրսևորած վարքը հանգեցրին ոչ միայն Հարավային Կովկասի ռազմաքաղաքական լանդշաֆտի փոփոխություններին՝ ուժերի նոր վերադասավորումներով: Առաջին հայացքից զուտ տարածաշրջանային թվացող այդ իրադարձությունները իրենց վրա կրելով աշխարհաքաղաքական զարգացումների կնիքը, որոշակի ազդեցություն են թողել նաև արտատարածաշրջանային հակամարտությունների ընկալումների, դիրքորոշումների և հատկապես լուծումների որոնման փոխակերպումներում: Եթե մինչ այդ համանման հակամարտությունների լուծումները փորձ էր արվում գտնել քաղաքական-դիվանագիտական հարաբերությունների շրջանակներում, ապա իրավիճակը կարծես թե փոխվել է 44-օրյա պատերազմից հետո: Արցախի Հանրապետության շուրջ տեղի ունեցած ռազմական ու քաղաքական իրադարձությունները նոր զարգացումների ցուցիչ հանդիսանալով, ընկալելի դարձրին կոշտ ուժի կիրառմամբ պետությունների առջև ծառայած խնդիրների լուծումը, ինչի մասին են փաստում նաև Ուկրաինայի շուրջ տեղի ունեցող զարգացումները: Այս և Ղարաբաղյան հիմնախնդրի՝ որպես աշխարհաքաղաքական զարգացումների ցուցիչի փոխապայմանավորվածությանն առնչվող խնդիրների հետազոտմանն է նվիրված սույն հոդվածը:

Ղարաբաղյան հիմնախնդրի աշխարհաքաղաքական գործոնները: Ընդհանրապես Ղարաբաղյան հակամարտության պատմության ուսումնասիրությունը վկայում է, որ նրա ծագման ու շարժընթացի դինամիկան մեծապես պայմանավորված է եղել աշխարհաքաղաքական զարգացումներով: Բավական է հիշել, որ հիմնա-

խնդիրը, որպես այդպիսին առաջացել է Ռուսական կայսրության փլուզման հետևանքով, երբ Թուրքիայի ջանքերով Հարավային Կովկասում հիմնադրվեց Իրանի հարավային հատվածի անվանումը կրող ադրբեջանական պետությունը, կարճ ճամանակ անց տարածքային հավակնություններ ներկայացնելով հարևան բոլոր պետություններին, այդ թվում՝ Արցախին [4]: Այնուհետև հեղափոխությունը դեպի արևելք արտահանելու բոլշևիկների աշխարհաքաղաքական հաշվարկները խորհրդային ղեկավարությանը դրդեցին 1920-ական թթ. Լեռնային Ղարաբաղը մտցնել Խորհրդային Ադրբեջանի վարչական սահմաններ [18, էջեր 77-78], և ապա «աջ փակել» ԼՂԻՄ կազմավորվելու ընթացքում նրա տարածքների մասնատման [14, 222-224 էջեր], այդ թվում նաև՝ Կարմիր Քրդստանի ստեղծման ու վերացման վրա [7, էջեր 83-106]:

ԽՍՀՄ կազմաքանդման տարիներին աշխարհաքաղաքական նկատառումներից ելնելով Արևմուտքը և նրա առաջնորդողը համարվող ԱՄՆ-ն հանդես եկավ երկրամասի ազգաբնակչության հայացքներին համապատասխան հիմնահարցը լուծելու հայտարարություններով [13, էջեր 48-54]: Բայց արդեն 1991 թվականին, երբ ԽՍՀՄ լուծարումը մտավ ավարտական փուլ և Լեռնային Ղարաբաղը Արևմուտքի տեսակետից կատարել էր ԽՍՀՄ փլուզման պայթուցիկի իր դերը, ԱՄՆ-ը հայտարարեց, որ իրենք հետխորհրդային տարածքում նորանկախ պետությունները ճանաչելու են միութենական հանրապետությունների սահմաններում [3, 10-11 էջեր]:

Այլ շարժառիթներ սկսեցին «աշխատել» հետխորհրդային շրջանում, երբ Հարավային Կովկասը հայտնվեց խոշոր պետությունների աշխարհաքաղաքական շահերի կիզակետում: Այս առումով Ղարաբաղյան հակամարտությունն ունեցել է աշխարհաքաղաքական մի

քանի փոխակերպումներ, որոնք հարաբերականորեն կարելի է բաժանել հետևյալ քրոնոքաղաքական ժամանակահատվածների. ռուսական և օսմանյան կայսրությունների քայքայման ժամանակահատված, խորհրդային աշխարհաքաղաքական ժամանակաշրջան, հետխորհրդային ժամանակաշրջան և Եվրոամերիկյան քաղաքական հարթություն [1, էջ 148]:

Իրադարձությունները տարածաշրջանային ու աշխարհաքաղաքական արդի զարգացումների համապատկերում: Համապատասխան դասեր քաղելով 1990-ականների իր իսկ սանձազերծած պատերազմական գործողությունների հետևանքներից և ըմբռնելով աշխարհաքաղաքական զարգացումների կարևորությունը Ղարաբաղյան հիմնախնդիրների լուծման գործընթացում¹, ադրբեջանական կողմը հետագա տարիներին ընդհանուր առմամբ պահպանում էր ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում հակամարտության կարգավորման գերտերությունների սահմանած կանոնները² [19]: Միաժամանակ, հատկապես Ի. Ալիևի իշխանության գալուց հետո միջազգային կառույցներում ադրբեջանական դիվանագիտությունը առավել մեծ ակտիվություն սկսեց ցուցաբերել՝ դառնալով հիմնախնդրին առնչվող նոր բանաձևերի ու որոշումների նախաձեռնող³: Դրան զուգահեռ, պաշտոնական Բաքուն աստիճանաբար ավելացնում էր ագրեսիվ հռետորաբանությունն ու ռազմական ճանապարհով

խնդիրը լուծելուն ուղղված գործնական քայլերը⁴ [26]: Նպատակը՝ մի կողմից միջազգային հանրության և գերտերությունների շրջանակներում հակամարտության կերպարի վերաբերյալ ադրբեջանական ընկալումների ձևավորումն էր, դրանից բխող քաղաքական հետևանքներով [16, էջեր 49-58]: Մյուս կողմից՝ արդեն իսկ ձևավորված կողմնակալ դիրքորոշումն օգտագործելը նպաստավոր տարածաշրջանային ու աշխարհաքաղաքական իրադրության պայմաններում ռազմական ճանապարհով խնդիրը լուծելու համար⁵ [26]: Դրան էին ուղղված նաև սահմանային լարվածության պահպանման և շփման գծի տարբեր հատվածներում պարբերաբար իրականացվող դիվերսիոն-հետախուզական գործողությունները [20, էջեր 31-58]:

Այս առումով բավականին հատկանշական են տարածաշրջանային ու աշխարհաքաղաքական իրողությունների և ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտ գործերի շփման գծում տեղի ունեցած բախումների կամ տեղային մարտական գործողությունների զուգահեռները: Դրանցից մեկն էլ համընկնում է 2008 թվականի փետրվարի 17-ին Կոստվոյի անկախության հռչակմանը, ինչը աննախադեպ ալիք առաջացրեց հետխորհրդային նմանատիպ հակամարտությունների գոտում: Արդեն 2008 թ. մարտի 3-ի լույս 4-ի գիշերը օգտվելով նաև ՀՀ-ում տեղի ունեցող հետընտրական գործընթացներից, ադրբեջանական կողմը հերթական սադրանքը նախաձեռնեց Մարտակերտի շրջանի Լեռնարիս բնակավայրի ուղղությամբ՝ կարճ ժամանակահատվածով զրավելով ՊԲ մարտական դիրքերից մեկը [23]: Բացի դրանից, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայում ներկայացրեց խիստ միակողմանի և պակասազորական մի բանաձև՝ փորձելով իրեն ապահովագրել «Կոստվոյի սինդրո-

¹ Ադրբեջանի նախագահների՝ Այազ Մուխաիբովի, Աբուլֆազ Էլչիբեյի և Հեյդար Ալիևի միմյանցից տարբերվող արտաքին քաղաքական կողմնորոշումները նաև այդ նպատակն են հետապնդել: Ղարաբաղյան հիմնախնդիրը իր օգտին լուծելու նպատակով է 1993-ին Ադրբեջանը մտել ԱԳՀ կազմի մեջ:

² Բաքուն ակնկալում էր օգտագործել էներգակիրների մատակարարման հարցում ԱՄՆ-ի և Եվրամիության շահերը Ղարաբաղը Ադրբեջանին վերադարձի համար: ԵՄ-ի հետ էներգետիկ համագործակցության համաձայնագրերը Բաքվում մեկնաբանվել են բացառապես «նավթը՝ Ղարաբաղի դիմաց» բանաձևի շրջանակներում: Հետագայում փորձեր արվեցին օգտագործել Մոսկվայի շահագրգռվածությունը ՀԱԳԿ-ին Ադրբեջանի անդամակցության հարցում, եւ այս անգամ բանաձևեր հնչեց այսպես՝ «ՀԱԳԿ-ն՝ Ղարաբաղի դիմաց», իսկ հետո՝ «ԵԱՏՄ-ն՝ Ղարաբաղի դիմաց»: Տես՝ [19]:

³ Կարևորելով հանգամանքը՝ Բաքուն դեռևս ադրբեջանա-ղարաբաղյան պատերազմի տարիներին ձեռնամուխ եղավ այս ուղղությամբ ակտիվ դիվանագիտական քայլերի իրագործմանը: 1992թ.՝ ՄԱԿ-ին անդամակցումից անմիջապես հետո, Ադրբեջանը դիմեց կառույցին՝ խնդրելով վերջինիս արտահայտել իր տեսակետը Հայաստանի այսպես կոչված «ռազմատենչ քաղաքականության վերաբերյալ» և «միջոցներ ձեռնարկել նման գործողությունների կանխման ուղղությամբ»: 1993թ.՝ պատերազմական գործողությունների ամենաթեժ շրջանում, ՄԱԿ ԱԲ-ը չորս բանաձև ընդունեց, որոնցում առկա ձևակերպումներն ընտրողական մեկնաբանություններով պարբերաբար օգտագործում է ադրբեջանական քարոզամեթոդներն՝ միջազգային հանրությանը սեփական դիրքորոշումը որպես իրականություն մատուցելու համար:

⁴ 2008 թվականի հունիսի 26-ի Բաքվում կայացած գորահանդեսին, Ի. Ալիևը շեշտեց. «Այս ուղղությամբ վերջին տարիներին մեծ աշխատանք է կատարվել: Համեմատության համար կարող եմ ասել, որ 2003 թվականին երկրի ռազմական ծախսերն առնվազն տասն անգամ ավելի քիչ էին, քան այսօր: Այսօր բանակի կառուցման գործընթացը լրացվում է նրա նյութատեխնիկական բազայի հզորացմամբ: Վերջին հինգ տարիների ընթացքում Ադրբեջանի ընդհանուր ռազմական ծախսերն անել են ավելի քան 10 անգամ, իսկ այսօր դրանք գերազանցում են 2 միլիարդ դոլարը: Որոշ ժամանակ առաջ մենք խնդիր ենք դրել ուժեղացնել ադրբեջանական բանակի նյութատեխնիկական բազան: Ես շատ ուրախ եմ, որ այսօր մենք դրան հասնում ենք: Հետագայում ավելի զգալի աշխատանք կարվի»: Տես՝ [26]:

⁵ Ադրբեջանական կողմը բազմիցս է հրապարակավ հայտարարել ռազմական ճանապարհով Ղարաբաղյան խնդիրը լուծելու մասին: Դեռևս 2008 թվականի հունիսի 26-ին Բաքվում կայացած գորահանդեսին, Ի. Ալիևը շեշտեց, որ հզոր բանակի ստեղծումը դրական ազդեցություն ունի և կունենա բանակցային գործընթացի վրա, ինչպես նաև թույլ կտա ամեն կերպ վերականգնել արդարությունը և ազատագրել մեր հայրենի հողերը օկուպանտներից: Տես՝ [26]:

մից» [9, էջ 74]: Մարտի 14-ին ՄԱԿ Գլխավոր վեհաժողովը 62-րդ նստաշրջանում ընդունեց ԱՀ ներկայացրած «Իրավիճակը Ադրբեջանի գրավյալ տարածքներում» բանաձևը [25]: Միջազգային ամենահեղինակավոր կառույցի կողմից նման բանաձևի ընդունումը, ինչ խոսք, պետք է դասել Բաքվի դիվանագիտական հաջողությունների շարքին⁶: Նույն թվականի հունիսի 26-ին Ադրբեջանի զինված ուժերի ստեղծման 90-ամյակի առթիվ անցկացված զորահանդեսի ժամանակ Իլհամ Ալիևը բացահայտորեն հայտարարեց, որ ադրբեջանական ժողովուրդը հոգնել է բանակցություններից, և մենք պետք է պատրաստ լինենք ցանկացած պահի ռազմական ճանապարհով ազատագրելու մեր բռնազավթված տարածքները [26]: Տեղեկություններ կան առ այն, 2008 թվականի օգոստոսյան ռուս-վրացական առնակատման օրերին ադրբեջանական կողմը պատրաստվում էր առիթն օգտագործել Ղարաբաղյան ճակատում հարձակման անցնելու համար: Սակայն օգոստոսյան պատերազմի՝ ի վնաս Վրաստանի շուտափույթ ավարտը և ռուսական կողմի դիրքորոշումը [33], իսկ այնուհետև Ռուսաստանի միջնորդությամբ Հայաստանի ու Ադրբեջանի ղեկավարների ստորագրած Մայնեղորձյան հռչակագիրը [32] առժամանակ հետաձգեցին նախահարձակ ռազմական գործողությունները: Այսինքն՝ չնայած ադրբեջանական բանակը, ըստ պաշտոնական Բաքվի պատրաստ էր ռազմական ճանապարհով լուծելու Ղարաբաղյան հիմնախնդիրը [26], այդուհանդերձ աշխարհաքաղաքական պայմանները դեռևս նպաստավոր չէին, չէին հասունացել նման գործողության իրականացման համար: Նույնը կարելի է ասել նաև 2014-2015 թթ. հակամարտ գործերի շփման գծի տարբեր հատվածներում ադրբեջանական կողմի նախաձեռնած զինված բախումների և մասնավորապես դիվերսիոն ներթափանցումների վերաբերյալ, որոնք ժամանակային առումով համընկնում են ռուս-ուկրաինական լարվածության, սիրիական իրադարձությունների և այլ տարածաշրջաններում տեղի ունեցած սրացումների հետ: Այդպիսի հերթական քայլերից մեկն էլ կապված է 2016 թվականի ապրիլյան մարտական գործողությունների հետ, որում իրենց

⁶ Այդուհանդերձ, առկա են որոշակի քաղաքական նրբություններ, ինչից դժգոհ են մնացել ԱՀ-ում: Բանն այն է, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրները դեմ քվեարկեցին, իսկ հարյուրից ավելի երկրներ ձեռնպահ մնացին Ադրբեջանի տարածքային ամբողջականությանը բանաձևին համապատասխան սատարելուց: Գիտակցելով այս հանգամանքը՝ ԱՀ-ը դիվանագիտական խողովակներով հարց բարձրացրեց ԵԱՀԿ Մինսկի խմբին Ղարաբաղյան հակամարտության կարգավորման մանդատից զրկելու, նույնիսկ այն լուծարելու ընթացակարգերի ճշգրտման մասին՝ դրանով իր դժգոհությունը հայտնելով համանախագահների որդեգրած քաղաքականության դեմ:

ուրույն տեղն ունեն նաև արտաքին քաղաքական գործոնները [27]: Բոլոր դեպքերում ինչպես յուրաքանչյուր պատերազմում, այնպես էլ այս դեպքում, բացի ռազմական հնարավորություններից անհրաժեշտ էին արտաքին քաղաքական նպաստավոր պայմաններ: Ադրբեջանական կողմը նման քայլի գնացել է ինչպես աշխարհաքաղաքական՝ պայմանավորված ԱՄՆ-ՌԴ հակասություններով⁷ [11, էջ 6] այնպես էլ տարածաշրջանային իրողությունների հաշվառմամբ [11, էջեր 5-9]:

Այսինքն՝ ինչպես պատմական նախընթաց իրադարձություններն են վկայում, ադրբեջանական կողմի համար մասնավորապես այդպիսի նպաստավոր պայմաններ են ստեղծվել բոլոր այն դեպքերում, երբ ռուսական կողմը, անկախ հանգամանքներից կամ թուլացած էր, կամ անհրաժեշտ ուշադրություն չէր դարձնում տարածաշրջանին: Այդպես է եղել 1920-ականներին, երբ Լեռնային Ղարաբաղը մտցվեց Խորհրդային Ադրբեջանի կազմ, 1990-ականներին, երբ Արցախն անկախացավ և այդպես էլ 2020 թվականին, երբ ստորագրվեց նոյեմբերի 9-ի (10) հայտարարությունը [34]:

Ղարաբաղյան հակամարտության սրացումները ռուս-ուկրաինական աշխարհաքաղաքական գործընթացների համապատկերում: Այն, ինչ այսօր տեղի է ունենում ռուս-ուկրաինական և ավելի լայն համապատկերում Արևմուտք-Ռուսաստան հարաբերություններում կարելի է բնորոշել որպես նոր աշխարհակարգի ձևավորմանն ուղղված գործընթացների հերթական արար, որի մասին խոսում են ինչպես ռուսական կողմում [37], այնպես էլ դրանից դուրս [40], վերլուծաբաններ ու քաղաքագետներ: Ընդ որում հարկ է նշել, որ մինչ այս պատերազմը թեև ութ եւ ավելի տարիներ շարունակ Ուկրաինան ճնշում եւ անմարդկային վերաբերմունք էր ցուցաբերում Դոնբասի ու Լուգանսկի մարզերի ազգաբնակչության նկատմամբ, այդուհանդերձ ուղղակի լայնածավալ ռազմական գործողություններ չէր ձեռնարկում խնդիրը ուժով լուծելու համար [30]:

Ինչպես արդեն նշվեց, ռուս-ուկրաինական աշխարհաքաղաքական գործընթացներն իրենց անուղղակի արտացոլումը գտան նաև ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտ գործերի

⁷ Հաշվի առնելով այն, որ հարձակումը ԼՂՀ-ի վրա սկսվել է Ի.Ալիևի՝ ԱՄՆ-ում գտնվելու պահին, որը մեկնաբաններ զուգահեռներ են տանում կատարվածի և 2008թ. Օգոստոսին Հարավային Օսիայի դեմ ձեռնարկված ավանտյուրայի միջև: Բոլոր դեպքերում, Հարավային Կովկասում Ռուսաստանի ներգրավումը ռազմական գործողություններին կնշանակել «երրորդ ճակատ» բացել վերջինիս դեմ: Տրամաբանական է դիտարկել այն վարկածը, թե «ապրիլյան ավանտյուրան» գորբալ հարթությունում լիովին համապատասխանում էր կամ, նվազագույնը՝ չէր հակասում Միացյալ Նահանգների ազգային շահերին: Տես [11]:

շվման գծում տեղի ունեցած դիվերսիոն-հետախուզական գործողությունների ակտիվացմամբ [22]: Այսպես, դեռևս 2014 թվականին ադրբեջանական կողմը հասկանալով Ուկրաինայի շուրջ ծավալվող ՆԱՏՕ-Ռուսաստան աշխարհաքաղաքական գործընթացները, մի կողմից փորձեց իրեն ապահովագրել Ղրիմի Ռուսաստանին միացման շուրջ ծավալվող իրադարձությունների հնարավոր բացասական ազդեցությունից, մյուս կողմից՝ օգտագործելով այն հանգամանքը, որ միջազգային դերակատարները ուշադրությունից դուրս են թողել տարածաշրջանը, ձեռնարկեց քայլեր, որոնք միտված էին ռազմական ճանապարհով խնդրի լուծման սեփական նպատակներն ընկալելի դարձնելուն: Ապրիլյան պատերազմից առաջ Հայաստանում եւ հարակից տարածաշրջանում (Հարավային Կովկաս) ստեղծվել էր աշխարհաքաղաքական բեւեռների մրցակցությամբ եւ սեփական կարողությունների մասին գերազնահատված պատկերացումներ ունեցող Ադրբեջանի սանձարձակ նկրտումներով պայմանավորված գերլարված իրավիճակ [15, էջ 66]: Ավելի պարզորոշ՝ եթե Ադրբեջանը վստահ չլիներ, որ Ռուսաստանը չի օգնելու եւ չի պաշտպանելու Հայաստանին ու Լեռնային Ղարաբաղին, նման ռիսկային քայլի չէր դիմի [8, էջ 18]:

Նշված սրացումների տրամաբանական հետևանքը հանդիսացավ 2016 թվականի ապրիլին Ադրբեջանի կողմից նախաձեռնած ռազմական գործողությունները [2]: Սակայն նրա հետագա ծավալումը հնարավոր դարձավ կանխել մի կողմից Պաշտպանության բանակի զինձառայողների սխրագործությունների և ողջ հայության միասնության [12], մյուս կողմից էլ, այն պատճառով, որ գլոբալ աշխարհաքաղաքական գործընթացները գտնվում էին իրենց սաղմնային զարգացումների մակարդակում⁸:

Իրադարձությունները բլոբրովին այլ էին 2020 թվականի աշնանը՝ Արցախի դեմ ձեռնարկված լայնածավալ ռազմական գործողություն-

ների օրերին: Ուսումնասիրողների կարծիքով պատերազմ սանձազերծելու նշված ժամանակահատվածի ընտրությունը պատահական չէ: Մատնանշվում են ԱՄՆ նախագահական ընտրությունները, ռուս-թուրքական մերձեցումը, հայ-ռուսական հարաբերությունների վատթարացումը, կորոնավիրուսով պայմանավորված համաշխարհային խնդիրներն ամբողջ աշխարհում և այլ արտաքին ու ներքին հանգամանքներ [10]: Սակայն կարծում ենք, Արցախի դեմ ագրեսիա իրականացնելու համար կարևորվել է նաև Ուկրաինայի շուրջ ծավալվող աշխարհաքաղաքական գործընթացները, որոնց խորքային շերտերը դեռևս մնում են չբացահայտված: ՌԴ պաշտպանության նախարարությունը վերջերս հրապարակել է Ազգային զվարդիայի մարտական հրամանի բնօրինակները, որոնք ապացուցում են Ուկրաինայի նախապատրաստությունը այս տարվա մարտին Դոնբասի վրա հարձակվելու համար [29], ինչը փաստորեն կանխվել է ՌԴ կողմից ձեռնարկված հատուկ ռազմական գործողության շրջանակներում [42]: Բոլոր դեպքերում ակնհայտ է, որ 2020 թվականին Արցախի դեմ ձեռնարկված ադրբեջանա-թուրքական ագրեսիայի ընթացքում միջազգային դերակատարների անտարբերությունն ու պահվածքը, գուցե նաև անդրկուլիսային պայմանավորվածությունները, նախադեպ են ստեղծել, այդ թվում նաև ուկրաինական իրադարձությունների համար, խնդիրները լուծել ռազմական ճանապարհով [17]:

Նշված իրադարձությունների միջև հերթական զուգահեռների անցակցման ու փոխկապվածության հավելյալ փաստարկ կարող է հանդիսանալ Ռուսաստանի կողմից Ուկրաինայում հատուկ ռազմական գործողությունների իրականացումը և դրան զուգահեռ ռուսական խաղաղապահ զորախմբի պատասխանատվության գոտի ադրբեջանական զինված ուժերի ներթափանցման եւ հրադադարի ռեժիմի խախտման փաստերը [35], շվման գծին հարող բնակավայրերի բնակիչներին սեփական օջախները լքելուն ուղղված հայտարարություն սպառնալիքները [24], Արցախ մտնող գազատարի նպատակային խափանումները և պաշտոնական Բաքվի ձեռնարկված բազմաբնույթ այլ սաղրանքները [21]:

Բոլոր դեպքերում, Ղարաբաղյան հակամարտության ծագումը, իսկ այնուհետև նաև սառեցումը, ստատուս քվոյի հաստատումը կամ թեժացումը հանդիսացել են աշխարհաքաղաքական գլոբալ զարգացումների հետևանք կամ նախերգանք: Եթե Ղարաբաղյան հիմնախնդրի ծագումը հետևանք էր 1920-ական թթ. տեղի ունեցած համաշխարհային իրադարձությունների, ապա 1980-ականների շարժումը նախերգանքն էր սպասվող նոր գլոբալ աշխարհաքա-

⁸ Ըստ քաղաքագետ Ա. Քանանյանի՝ Առավել քան հավանական է, որ ապրիլի 2-ից սկսված գործողություններում Ադրբեջանը փորձարկել է յուրօրինակ ռազմավարություն. նախ՝ սկսելով տեղայնական բնույթի հետախուզախափանարար հարձակողական ներթափանցում ենթադրող ռազմական գործողություններ՝ Բաքուն գործնականում ստուգում էր Հայաստանի զինված ուժերի մարտական պատրաստությունը, պաշտպանական համակարգի ճգնաժամային արդյունավետությունը եւ պաշտոնական Երևանի քաղաքական ու դիվանագիտական համարձակության աստիճանը: Եթե Բաքվի եւ արտաքին ուժի կենտրոնների կանխատեսումներն ու սպասելիքները ողջ ծավալով իրականություն դառնային եւ հանկարծակի հուժկու հարձակման ենթարկված հայկական առաջապահ ստորաբաժանումներն ի գործու չլինեին արդյունավետ պաշտպանական մարտեր մղել ու սկսեին անկանոն նահանջ, ապա որպես տեղայնական սկսված պատերազմը արագորեն կվերածեր համապարփակ «բլիցկրիգ»-ի փորձի: Տես՝ [15, էջ 72]:

դաքական գործընթացների: Այս առումով առանձնանում է նաև 2020 թվականի Արցախի դեմ ուղղված ադրբեջանա-թուրքական ագրեսիան, որպես նախերգանք գլոբալ աշխարհակարգի ճգնաժամի և գալիք աշխարհաքաղաքական փոփոխությունների: Այն հանգամանքը, որ ընդհանուր առմամբ ամբողջ աշխահն անտարբերություն ցուցաբերեց տեղի ունեցող ռազմական գործողությունների և պատերազմի ընդացքում իրականացվող բռնությունների նկատմամբ, իսկ հրադադարի հաստատումից հետո էլ շարունակեց իր կրավորական պահվածքը Արցախում ապրող ազգաբնակչության հումանիտար խնդիրների նկատմամբ, վկայեց արդի աշխարհում մինչ այդ գոյություն ունեցած խաղի կանոնների անարդյունավետության և վերանայման անհրաժեշտությունը:

Մյուս կողմից՝ այս իրողությունների գիտակցումը ցուցիչ դարձավ համանման խնդիրներ ունեցող երկրների համար դրանք լուծելու կոշտ ուժի կրառմամբ: ՉԼՄ-ներում հայտնվող տեղեկությունների համաձայն Չինաստանը և սպատրաստվում է ռազմական ճանապարհով լուծել Թայվանի խնդիրը [36]: Չնայած այդպիսի հայտարարություններ պարբերաբար են հայտնվում մամուլի էջերում [44], սակայն կարծում ենք, որ ներկայումս այդ սցենարն ավելի հավանական է թվում, հաշվի առնելով նաև այդ երկրի պաշտոնական հայտարարությունները [31]: Մարտի 17-ին Մոդովայի Հանրապետության նախագահն է հայտարարել, որ պահանջում է դուրս բերել Ռուսական խաղաղապահ զորակազմը Մերձդնեստրի չճանաչված հանրապետությունից [39]: Վերջին օրերին լարվածության միտումներ են արձանագրվում Կոսովոյի ու Մերքիայի հարաբերություններում [43], որտեղ կողմերը առաժմ տեղեկատվական հարթակում են փոխադարձ մեղադրանքներ հնչեցնում միմյանց հադեպ [41]: Մարտի 26-ին Լեհ գեներալ, ցամաքային զորքերի նախկին հրամանատար Վալդեմար Սկսիպչակն է հայտարարել, որ Կալինինգրադի շրջանը գտնվում է ռուսական օկուպացիայի տակ, և որ Լեհաստանը պետք է «պահանջի իր իրավունքները» [38]: Նույն օրը, Սաուդյան Արաբիայի գլխավորած կոալիցիան ռազմական գործողություն է սկսել, որի նպատակն է դադարեցնել հարձակումներն իր նավթային օբյեկտների վրա եւ պաշտպանել աշխարհի էներգիայի աղբյուրները [28]: Դժվար չէ կանխատեսել, որ ռուս-ուկրաինական իրադարձությունների հետագա ընթացքով պայմանավորված, մասնավորապես Ռուսաստանի ձախողման դեպքում, այս հայտարարություններին կհետևեն կոնկրետ գործընթացներ: Այսինքն՝ նշված երկրները կփորձեն օգտվել դրանից և կոշտ ուժի կիրառմամբ լուծել ինչպես առկա հիմնա-

խնդիրները, այնպես էլ տասնամյակներ շարունակ մտքում փայփայած երազանքները:

Այսպիսով, վերլուծելով և զուգահեռներ անցկացնելով գլոբալ աշխարհաքաղաքական փոփոխություններն ու Ղարաբաղյան հակամարտության շուրջ տեղի ունեցած առանցքային զարգացումները, գալիս ենք հետևյալ եզրակացության: Ղարաբաղյան հակամարտությունը առաջացել, սառեցվել և թեժացել է գլոբալ աշխարհաքաղաքական փոփոխությունների համատեքստում: 1920-ականներին հիմնախնդրի ծագումը և ապա սառեցումը սերտորեն առնչվում են գլոբալ այն փոփոխությունների հետ, որոնք հանգեցրել են երկու համաշխարհային բևեռների՝ կապիտալիստական և սոցիալիստական համակարգերի ձևավորմանը:

1988-ին վերսկսված արցախյան շարժումը և դրան հաջորդած պատերազմական գործողությունները հետևանք էին նոր գլոբալ փոփոխությունների, որոնք ընդհանուր առմամբ հանգեցրին միաբեվեռ աշխարհակարգի ձևավորմանը: 2020 թվականի Արցախի դեմ ուղղված ադրբեջանական ագրեսիան և ներկայումս Ռուսաստան-հավաքական Արևմուտք հակամարտությունը թույլ են տալիս խոսելու գլոբալ աշխարհաքաղաքական փոփոխությունների հերթական ալիքի մասին: Այսինքն՝ ռուս-ուկրաինական ռազմական գործողությունները իրենց բնույթով առավել գլոբալ հակամարտության մաս կազմելով ընդամենը սառցալեռան երևացող մասն են հանդիսանում: Խորքային իմաստով դրանք ընթանում են հավաքական Արևմուտքի և Արևելքի միջև: Կկարողանա արդյոք Ռուսաստանը հերթական անգամ համախմբել կամ մաս կազմել հավաքական Արևելքին, դժվար է կանխատեսել, մանավանդ, որ արևելքի ներկայիս հսկան՝ Չինաստանը կարծես թե հետևում է դիվանագիտության մեջ հայտնի «սպասման հնարքին» (стратегемы выжидания), կամ ինչպես չինական ասացվածքն է հուշում՝ «Լեռան վրա նստած՝ դիտելով վագրերի կռիվը» [6, էջեր 179-180]: Թե ինչպիսի աշխարհակարգ է ձևավորվելու տեղի ունեցող արդի գլոբալ իրադարձությունների հետևանքով դժվար է ասել: Բայց որ աշխարհը թևակոխել է փոփոխությունների հերթական շրջափուլ և այլևս առաջվանը չի լինելու կասկածից վեր է:

Կասկածից վեր է նաև այն, որ օգտվելով 2020 թվականի ռազմական գործողություններից հետո հայկական կողմերի բավականին խոցելի վիճակից, ադրբեջանական կողմը ձգտում է հնարավորինս շուտ Հայաստանին պարտադրել ստորագրելու, այսպես կոչված խաղաղության պայմանագիրը: Այս դեպքում, ինչպես չինական ստրատագեմաների մեկնաբաններն են շեշտում՝ «խոցելի դիրքում գտնվելու ժամանակ փախուստը լավագույն մեթոդն է, մանավանդ, երբ

տարբերակների ընտրությունը փոքր է: Կամ պետք է կասկածելի արդյունքով մինչև վերջ կռվել կամ հաղթողի ողորմածության ներքո խաղաղություն հաստատել: Բայց խոցելի դիրքի դեպքում մինչև վերջ կռվելը նշանակում է չափից շատ գոհաբերել, իսկ երկիրը հաղթողի ողորմությանը թողնելը այլոց պայմանների լիակատար ընդունումն է: Այս դիրքում փախուստն իսկապես լավագույնն էլքն է, քանի որ այն թույլ է տալիս խնայել սեփական ուժերը և նույնիսկ պահպանել ավելի ուշ հաղթանակ տանելու հնարավորությունը» [5, էջ 182]:

Վերոնշյալ իրողությունները հաշվի առնելով մենք պետք է քայլեր ձեռնարկենք ձևավորվող նոր աշխարհակարգում մեր տեղը զբաղեցնելու համար: Բնականաբար դրան հասնելու համար անհրաժեշտ է գործուն և քրտնաջան աշխատանք տանել բոլոր ոլորտներում, գիտակցելով, որ մարտահրավերներին զուգահեռ ստեղծվում են նաև նոր հնարավորություններ:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Գալստյան Խ.**, Քաղաքական բանակցություններ. Տեսություն և պրակտիկա, Երևան, «Վան Արյան», 2007. - 228 էջ:
2. **Հասարթյան Ս.**, Ապրիլյան քառօրյա առնակատում (Արցախի 02-05.04.2016 թ.), Երևան, «Տիգրան Մեծ» 2017, - 168 էջ:
3. **Մանասյան Ա.**, Ղարաբաղյան հակամարտություն. Իրավաբաղադրական փաստերի և փաստարկների նվազագույն փաթեթ, Երևան, «Տիգրան Մեծ» 2008, - 257 էջ:
4. **Барсегов Ю.**, Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и комментарий / М. КРУГЪ, 2008. - Т. 1. – 944 с., раздел V.
5. **Василенко И.**, Политические перегаворы: учебное пособие. М., Гардарики, 2006. - 271с.
6. **Зенгер, Х. фон.** Стратегемы. О китайском искусстве жить и выживать. Т. 1. М., 2004. – 512 с.
7. **Բաբայան Դ.**, Կարմիր Քրդստան. Կազմավորման և լուծարման աշխարհաբաղադրական ապակետները, «21-րդ ԴԱԲ», թիվ 4 (10), Երևան, 2005 թ.:
8. **Բաղդասարյան Գ.**, Ապրիլյան դասերը և վերարժևորման գործընթացն Արցախում, Հայաստան-2016. Չսերտած դասեր, Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, Երևան, 2016:
9. **Գալստյան Խ.**, Կոսովոյի նախադեպն ու ԼՂՀ միջազգային ճանաչման հեռանկարները, Քաղաքագիտություն: Բուհական գիտամեթոդական նյութերի ժողովածու, Երևան, 2009:
10. **Թոռայան Տ.**, 2020 թվականի պատերազմ. Նախադրյալները, հետևանքները և ադետի հաղթահարման հնարավորությունները, [https://www.luys.am/img/artpic/small/17421d60c00deb99e93e2020թ.-ՊԱՏԵՐԱԶՄ.-ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ-](https://www.luys.am/img/artpic/small/17421d60c00deb99e93e2020թ.-ՊԱՏԵՐԱԶՄ.-ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ-ՊԱՏԵՐԱԶՄ.-ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ-)

ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ-ԵՎ-ԱՂԵՏԻ-ՀԱՂԱՎԱՀԱՐՄԱՆ-ՀՆԱՐԱՎԱՌՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.pdf

11. **Հարությունյան Գ.**, «Քառօրյա պատերազմի» դրդապատճառների շուրջ, ԳԼՌՌԲՄ. թիվ 2 (71), Երևան, 2016:
12. **Փաշայան Հ.**, Արցախի Հանրապետությունը և քառօրյա պատերազմը (ապրիլ 2016 թ.), http://www.noravank.am/img/detail.php?ELEMEN_T_ID=14725
13. **Փաշայան Հ.**, «ԱՄՆ-ի դիրքորոշումը Ադրբեյջան-ԼՂԻՄ հակամարտության նկատմամբ ԱՄՆ-ԻՄՀՄ հակադրության պայմաններում», ԱրՊՀ գիտական տեղեկագիր, Ստեփանակերտ, 2007, թիվ 3 (16):
14. **Փաշայան Հ.**, «1921 թ. հուլիսի 5-ի Կովբյուրոյի որոշման իրավաբաղադրական տեսանկյունները և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքային ամբողջականության խնդիրը», Միջազգային գիտաժողովի նյութեր նվիրված ԱրՊՀ հիմնադրման 40-ամյակին, Ստեփանակերտ 2009:
15. **Քանանյան Ա.**, «Արցախյան երկրորդ՝ «միջանկյալ» պատերազմ. չսերտած դասեր», Հայաստան-2016. Չսերտած դասեր, Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, Երևան, 2016:
16. **Քեռյան Գ.**, Դեյվիդ Աթլինսոնի գեկույցը Եվրոպայի Խորհրդի խորհրդարանական վեհաժողովում (2005 թ.), «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», Երևան, 2015 № 1 (16):
17. **Քևորգյան Հ.**, Մենք մարդկությանը սովորեցրինք, որ աշխարհում կարելի է ուժի կիրառմամբ հարցեր լուծել. Պարույր Հայրիկյան, <https://hraparak.am/post/0f662f743aea58230c57b6b6688e5e41>
18. 1921 թ. հուլիսի 5-ի չընդունված բայց իրագործված որոշումը տես՝ «Вестник архивов Армении», Ереван, 1989г. N 2, д. 14.
19. **Крылов А.** Карабахская проблема: Военный аспект. Россия и новые государства Евразии. М. 2016. № 3. С. 33. https://www.imemo.ru/files/File/magazines/rossia_i_novay/2016_03/3_Karabahskaya_Krylov.pdf
20. **Минасян С.**, Особенности «Карабахской стратегии» Азербайджана: политика «периферийных» действий, нефтяные ресурсы и гонка вооружений, «21-й ВЕК», № 2 (8), Ереван, 2008г.
21. «Գյուղը լքելու աղբրեջանական կոչերը խուճապային տրամադրություններ ստեղծելու տրամաբանություն ունեն». Հունան Թադևոսյան, <https://www.azatutyun.am/a/31725083.html>
22. 2014 թ. օգոստոսյան պատերազմը. հետադարձ հայացք, <https://razm.info/128210>
23. «Իրավիճակը լիովին վրահակվում է», ԼՂՀ պաշտպանության նախարար, ՊԲ հրամանատար, գեներալ-լեյտենանտ Մ. Հակոբյանի ճեպագրույցը, ՊԲ «Մարտիկ» պաշտոնաթերթ, թիվ 9 (771), 1-8 մարտ, 2008 թ.:

24. ՀՀ ԱԳՆ հայտարարությունը Ադրբեջանի կողմից Արցախում հումանիտար ճգնաժամ ստեղծելուն ուղղված գործողությունների վերաբերյալ, https://www.mfa.am/hy/interviews-articles-and-comments/2022/03/22/mfa_statement_artsakh/11362
25. ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի 2008թ. մարտի 14-ին ընդունած A/RES/62/243 բանաձև, <https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N07/478/37/PDF/N0747837.pdf?OpenElement>
26. Азербайджанская армия сегодня самая сильная в регионе, <https://azertag.az/ru/xeber/687429>, 26.06.2008.
27. «Апрельская война 2016 года». Что это было? <https://www.kavkaz-uzel.eu/blogs/83781/posts/42568>
28. Арабская коалиция начала операцию против хуситов в Йемене, <https://www.gazeta.ru/army/news/2022/03/26/17478883.shtml>
29. Брифинг Минобороны России, <https://function.mil.ru/newspage/country/more.htm?id=12412190@egNews>
30. Геноцид длиной в 8 лет: опубликован новый документ о зверствах националистов в Донбассе. <https://news.rambler.ru/conflicts/48252081>
31. Глава МИД Китая: Тайвань вернется в объятия родины, <https://www.kommersant.ru/doc/5249594>
32. Декларация Азербайджанской Республики, Республики Армения и Российской Федерации, 2 ноября 2008 год, <http://kremlin.ru/supplement/232>
33. Дмитрий Медведев: Августовская война 2008 года стала "серьезным уроком" для Армении и Азербайджана, <https://regnum.ru/news/polit/1432539.html>
34. Заявление Президента Азербайджанской Республики, Премьер-министра Республики Армения и Президента Российской Федерации, 10 ноября 2020 г. <http://kremlin.ru/events/president/news/64384>
35. Информационный бюллетень Министерства обороны Российской Федерации о деятельности российского миротворческого контингента в зоне нагорно-карабахского конфликта (на 26 марта 2022 г.), https://mil.ru/russian_peacekeeping_forces/bulletins/more.htm?id=12414883@egNews
36. «Китай просчитывает военный сценарий на Тайване», <https://www.gazeta.ru/politics/2022/02/27/14578177.shtml>
37. Лавров назвал ситуацию в мире эпохальной, <https://ria.ru/20220316/mir-1778405310.html>
38. Польский генерал считает, что Варшава может претендовать на Калининград <https://www.eurointegration.com.ua/rus/news/2022/03/26/7136680/>
39. Президент Молдавии призвала к выводу российских войск из Приднестровья, <https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/14095263>
40. Премьер Японии выступил за создание нового мирового порядка, <https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/14057601>
41. Премьер Косова: Сербия угрожает региональной стабильности, <https://www.eurointegration.com.ua/rus/news/2022/03/23/7136462/>, Вучич: Сербия вновь пытаются заставить признать Косово, <https://www.politnavigator.net/vuchich-serbiyu-vnov-pytayutsya-zastavit-priznat-kosovo.html>
42. Путин объявил о специальной военной операции в Донбассе, <https://www.rbc.ru/politics/24/02/2022/6216f2859a79474c63d4019b>
43. Страны Запада призвали Серию и Косово воздержаться от эскалации, <https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/14159765>
44. «Тайвань следующий?»: Почему КНР нужна наша победа на Украине, <https://svpressa.ru/politic/article/327185/>

Տճանաչումը է՝ 22.02.2022

Րեցենզիվում է՝ 18.03.2022

Մոտրվում է՝ 21.03.2022